

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

ՀԱՄԱՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնի կալուածքի տնտեսութիւնը.— Ներ-
քիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի մի նոր թաղ. քաղա-
քային ընտրութիւնները խաթմում. Նամակ խմբ-
ագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Ամերիկայի հայոց կոյճիւն. Կոչուտի
թաղման հանդէսը. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՂՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թուրքիի
տնտեսութիւն:

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՔԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ահա մի երկու տարի է, որ Էջմիած-
նում յարուցվել է վանական կալուած-
քի տնտեսական բարեփոխման խնդիրը: Փորձեր
են եղած, օրինակ, ոռոգման ջրի քանա-
կութիւնը աւելացնելու, հողագործութեան
և այդպէս զարգացնելու մէջ մի քանի փոփո-
խութիւններ մտնելու: Զիշը է, բարեփո-
խութիւնների ոչ մի հիմնաւոր ծրագիր չէ
մշակուած, բայց բարեփոխման խնդիրը յա-
րուցված է և պահանջում է իր լուծումը:
Կարեւոր ենք համարում մենք մեր կող-
մից այդ կալուածքի պայմանների մասին
ասել մի քանի խօսք:

Էջմիածնի կալուածքի համար հիմնական
նշանակութիւն ունի ջուրը: Ներքին կա-
լուածքի տնտեսական կալուածքը, որ մի փայլուն ապացոյց է
այդ մեծ տնտեսի շինարար և հեռատես
խելի, այժմ բաւականութիւն չէ տալիս
բոլոր պէտքերին և այդ պատճառով մեծ քա-
նակութեամբ հողեր մնում են անմշակ, զուրկ
լինելով ոռոգման միջոցից: Այժմ միայն հող
է պահանջվում, որ լինի իր նախկին վիճա-
կից չէլնի, չէլնի, այլ և անհրաժեշտ է

ջրի նոր աղբիւրներ որոնելու: Եւ այդ կա-
րելի է, որովհետեւ ստորերկրեայ ջրեր կան
այդ տեղերում: պէտք է միայն նրանց
գտնել և շահագործել:

Էջմիածնի անտառը նոյնպէս վնասվել
է թէ մշակական հսկողութեան բացա-
կայութեան և թէ ջրի պակասութեան
պատճառով: Հմուտ տնտես և հարկաւոր
վանական կալուածքի այդ կարեւոր մասը
կարգաւորելու և աւելի խելացի ու նպատա-
կայարար կերպով զարգացնելու համար:

Այդ անտառում կան, ի միջի այլոց,
թիթենիներ, որոնք կարող են, նոյն իսկ
այժմեան վիճակում շինարարի որդ կերակրե-
լու համար տալ մեծ քանակութեամբ տե-
րեւ: Զիշը է, այդ թիթենիները անմշակ են,
կարօտ են խնամքի, պէտք է աղտոյն
աւելորդ ճիւղաւորութիւններից և առա-
ջացնեն շինարարական յարմար թարմ
լինձիւններ, բայց նոյն իսկ առաջին տա-
րին կարելի է կէս և մինչև անգամ մի
ֆունտ սերմ պահել իսկ երկու երեք
տարուց յետոյ մինչև երեք ֆունտ սերմ:

Շինարարական ծրագրի կարող է ծառայել
կամ բոժոժ տալու նպատակին, կամ սեր-
մացու պատրաստելու գործին, որ այժմ
մեծ կարեւորութիւն ունի Կովկասում և
լուս գնով վաճառվում է:

Կալուածքի հողը վանքի մօտ տեղե-
րում չոր է և կարօտ ոռոգման. իսկ հե-
ռուները, Սև ջրի մօտերը, նա խոնավա-
նում է այնքան, որ մի քանի կէտերում
նոյն իսկ ճահճային բնաւորութիւն է ստա-
նում: Այդ կէտերում ստորերկրեայ ջուրը
շատ մօտ է հողի մակերևոյթին: Հեղու-
թեամբ կարող են այդ բաժնում զարգանալ
մի քանի բոյսեր, առանց ոռոգելու: Այդ-
տեղ կարելի է անտառ դնել, բամբակա-
ցանութեան փորձեր անել, վազի մի քանի
տեսակներից անել, խոտաբոյսեր ցանել:

Վանքը պահում է և կաթնատու և
լծկան տաւար: Ահալ առաջ ունենալով
անտեսութեան ներկայ պահանջները և
պայմանները, պէտք է կաթնատու անտառ-
ները սահմանափակ թւով պահել, որով-
հետեւ նրանք կաթնեղէններով քիչ ար-
գիւնք են տալիս, իսկ վանքը ուրիշ աղ-
բիւրներից ստանում է բաւականաչափ իւղ
և պանիր իր կարիքների համար: Ինչ վե-
րաբերում է լծկան տաւարին, նրա քանա-
կութիւնը պէտք է աւելացնել, որովհետեւ
հողագործութիւնը, հացահատիկների ցա-
նելը շահաւէտ է վանքի համար:

Զիշը է, վանքի մէջ, որի համար բաւական
է գուցէ մօտ 200 խալվար ցորեն, սպառ-
վում է տարեկան համարեա զրա կրկնակի
քանակութիւնը. բայց զաշտի հաշիւը պէտք
է չը խառնվի վանքի հաշիւների հետ և
նրա բերած արդիւնքը առանձին նկատի:

Այդ գործութիւնը արդէն սկսվել
է կանոնաւորվել և աջող դէպքում կարող
է զգալի առաջադիմութիւն անել:

Մեր անարկած և ուրիշ դրանց նման
բարեփոխութիւնների գործը ղեկավարելու
համար հարկաւոր է գործին հմուտ, մաս-
նագէտ անձն, որ սկսի հաստատ բարե-
նորոգումների գործով զբաղվել:

Չը պէտք է միանգամայն, մի երկու ամա-
վայ, նոյն իսկ մի երկու տարվայ մէջ մեծ
հետեւեցնել, տնտեսական հրաշքեր սպա-
սել: Գիւղատնտեսութեան մէջ առաջադի-
մութիւնը կատարվում է կամայականաց:

Բայց մի բան կարելի է պահանջել, որ
գործը հաստատ հիմքերի վրա զբաղվի լի-
նի, որոշ ծրագիր ունենայ, և կախված չը
լինի պատահարներից ու հաճոյքներից
և բաւականաչափ միջոցներ ու խրախոյս
գտնի շրջապատողների կողմից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի մի նոր թաղի ՄԱՍԻՆ

Թիֆլիսում մի նոր թաղ կայ, որը յանկարծ,
կարճ միջոցում, մի քանի տարվայ ընթացքում
լցվել է շինութիւններով և որը բաղդի առանձին
հաճոյքով զատապարտված է կրկին ոչնչա-
նալու, գետնի հետ հաւասարվելու:

Քաղաքային վարչութեան կարգադրութեամբ,
չինված տները քանդվում են առանձին եռանդով
և ընտելչները դուրս են վաճառվում իրանց նորաշէն
տներէն:

Այդ թաղը յայտնի է «Նախալովկա» անունով:
Ինչ կայ, ինչ է պատահել: Ինչու են տները
չինվել, եթէ պէտք է իսկոյն քանդվէին:

Այդ թաղի տները չինվել են քաղաքային հողի
վրա, սակայն առանց քաղաքային վարչութեան
թույլտուութեան և այնպիսի տեղում, որ մօտ
է պիւրօկսիլինի պահեստին և ուրեմն վտան-
գաւոր է համարվում բնակութեան համար:

Այդ տները չը պէտք է չինված լինէին. քա-
ղաքային վարչութիւնը պէտք է իր ժամանա-
կին առաջն առած լինէր այդ անթույլատրելի
բնակութեան:

Բայց ինչ անուն տանք այդ արդէն ոչ, ան-
գիթութեան հասած վարմունքին, որով քաղաքա-
յին վարչութիւնը խեղճ ընտանիքների կօպէկնե-
րով չինված տները կործանում է հազուադէպ
հշտութեամբ:

Ինչ էր անում մինչև այժմ քաղաքային վարչու-
թիւնը. ինչու ժամանակին արգելք չը դրեց բնակու-
թեան հաստատվելուն, իսկ այժմ իր խորհրդա-
ծութիւնները և իրաւունքները գործ է դնում չին-
ված տները քանդելով մարդկանց քրտինքի և աշ-
խատանքի արդիւնքը ոչնչացնելով:

Եթէ մեղաւոր են նոր թաղի բնակիչները, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՆՏԻԿ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գերմանացի երգիծաբաններից մէկը մի տեղ
ասում է, թէ տաղանդաւոր մարդիկ սովորաբար
տաղանդ ունեն մի քանի մէջ. ոչ ոք չէ կարող
տաղանդ ունենալ ամեն բանի մէջ: Բայց կան
մարդիկ, առանց որ և է տաղանդի, որոնք հա-
մոզված են, թէ ամեն բանի մէջ տաղանդ են,
ամեն բանի մէջ փորձում են իրանց ոյժը և
պատրաստ են տեսակ-տեսակ եղանակով երգել:

Զիշը այդպէս, տեսակ-տեսակ եղանակով եր-
գում են և «Новое Время» լրագրի հրապարա-
կախոսները, որոնք մի և նոյն ժամանակ կամե-
նում են ապացուցանել, թէ ամեն բանի մէջ տա-
ղանդ ունեն: Երբ սկսվեց մաքսային պատերազմը
Գերմանիայի դէմ, լրագրական հայրենասէրները,
որոնց թւում է իրան ամեն բանի մէջ տաղանդ կար-
ծող Սուվորինը, Մոսկովայի ֆարրիկանտների հետ
միասին շանկեղծ և ջրան ողբերգութեամբ սկսե-
ցին քարոզել, թէ որ և է զինում չը պէտք է ա-
նել Գերմանիային, թէ այդ պատերազմի հետե-
ւանքը կը լինի Ռուսաստանի տնտեսական ինք-
նուրոյն զարգացումը և ծաղկելը: Այսպէս էր խօ-
սում տաղանդաւոր հրապարակախօս Սուվորինը
մի երկու ամիս առաջ. բայց երբ, հիմա քամին
սկսեց ուրիշ կողմից փչել և այդ քամու հետ
նրա քարոզն էլ ուրիշ ուղղութիւն ստացաւ: Լա-
րախաղացի յատուկ ճարտիկութեամբ, այժմ, երբ
կնքվեց առեւտրական նոր դաշնագիրը Գերմա-
նիայի հետ, «Новое Время», տեսնելով որ այդ
դաշնագիրը ամենապակաս համակրութեամբ ընդուն-
վեց բոլոր այն անձանց կողմից, որոնց համար
թանկ է միջազգային յարաբերութիւնների խա-

ղաղ զարգացումը, ինքն ևս, նստեցնելով իր պա-
տերազմական փոքրը, սկսեց ուրիշ լարերի,
խաղաղաբարութեան և եղբայրութեան լարերի
վրա խաղալ: Ում յայտնի չէ, ասում է «Вестник
Европы» ամսագիրը, որ Սուվորինի օրգանը ջնքմ
պաշտպան է պրօսէկցիօնիզմի, միշտ քարոզում
է թշնամութիւն դէպի օտար ազգութիւնները:
Գերմանիայի դէմ մղած մաքսային պատերազմը
այդ լրագիրը ողջունեց հայրենասիրական սքան-
չացումով: Բայց այժմ, երբ կնքվել է նոր դաշ-
նագիրը, որ վերջ դրեց այդ պատերազմին, լրա-
գրի խմբագիրը իսկոյն համակրեց բոլորովին հա-
կառակ զգացումներով և իղէաներով: Ահա ինչ է
գրում նա. «Հապաղան պատկանում է ոչ թէ ա-
ռեւտրական պատերազմին, ոչ թէ արիւնին և եր-
կաթին, ոչ թէ աղաքական թշնամութիւններին,
այլ խաղաղութեան և սէրին»...

Այդ կերպարանափոխութիւնը կաւեւացնե՞լ մենք,
միշտ կատարվելու է, քանի որ քարոզները հին-
ված կը լինեն անձնական շահերի վրա. այսօր ձեռն-
տու է քարոզել, որ եկեղեցին կազմող ժողո-
վուրդն է, ամբոյն է, որովհետեւ նա է միայն, որ
պահում է բոլոր կրօնական ծէսերը, բայց երբ
ամբողջ կը դաշ եկեղեցի և դուրս կանի այդ
քարոզողներին, կը կամենայ իր իրաւունքը բա-
նեցնել, իսկոյն կը քարոզվի. ինչ գործ ունի ամ-
բողջ այս սուրբ տաճարի մէջ: Այդ տեսակ կեր-
պարանափոխութիւնները այժմ այլ ևս վնաս տալ
չեն կարող, այլ այն օգուտն ունեն, որ ինքն ամ-
բողջ սկսում է ճանաչել և գնահատել նրանց և
անխնայ հալածել:

Բայց թողնե՞ք մեր ասիական լարախաղացնե-
րին պարզաւ որքան կամենան և զինենք նրանց
երօթական ընկերակիցներին: Իրանք ևս կա-
մենում են խաբել, թող վիշել: Ֆրանսիացի
լարախաղացը ասում է. «Կամենում էք, որ

ամբողջ աշխարհը խաղաղվի», անտանելի սպառա-
գիծութեան, այն սպառազինութեան, որ միլիարդ-
ներ է նստում եւրօպական պետութիւնների վրա,
վերջ դնել.— «Սպանեցէ Պրուսիան»: Իրա դէմ
գերմանացի լարախաղացը ասում է. «Կամենում
էք, որ բոլոր ազգերի մէջ տիրապետի ընդհանուր
խաղաղութիւն և հաշտութիւն, «սպանեցէ ան-
հանգստութեան բացիլը», որի միակ աղբիւրը
Ֆրանսիան է, ֆրանսիական ազգային բնաւորու-
թիւնը, փառաւորութիւնը և շփոխված: Մի եր-
բորդ լարախաղաց, դարձեալ գերմանացի, բայց
գիտնական լարախաղաց, գիտնական ամենայն
լրջութեամբ առաջարկում է մի զարմանալի ծրա-
գիր. «Կամենում էք փրկել գերմանական և ռու-
սական ազգերը,—ուղբարկեցէ Ռուսաստան տասն
միլիօն գերմանացի»:

Տեսնե՞ք որն է այն միջոցը, որ առաջարկում
է ֆրանսիացի հրապարակախօսը աշխարհիս մէջ
ընդհանուր և հաստատ խաղաղութիւն տարածե-
լու համար: Յայտնի է, որ երեքսկսեան դաշ-
նակցութեան հետեւանքն այն եղաւ, որ Եւրօ-
պայի բոլոր պետութիւնները ստիպված են շա-
րունակ վիճաւորված մնալու և ներկայումս ամ-
բողջ Եւրօպայում թագաւորում է զինաւորված
խաղաղութիւն: Այդ զինաւորութիւնը, որ մի-
լիարդներ է նստում, սպառում է երկրի բոլոր
ոյժերը, ջրատու է երկրի տնտեսական, նոյն իսկ
մտաւոր զարգացումը:

Եւ ահա մի ֆրանսիացի գրող այդ հիւան-
գութեան և չարիքի արմատը համարում է
Պրուսիան ու Գերմանիան և ասում է, որ
միակ անձն, որ կարող է իրերի այդ վիճակը
փոխել, Վիլհելմ II-ը կայսրն է: Դա ստատիկ
կերպով յարձակվում է Բիսմարկի վրա, որը, իբր
թէ, ոտնակոխ էր անում ամեն օրէնք և իրաւունք
և իր քաղաքական նպատակներին համեմատ հա-

մար, գործ էր դնում բռնութիւն: Նա բռնութեամբ
խելց Ֆրանսիայից Լյուզա-Վոլթարինդիան:

Սակայն ֆրանսիացի գրողը այնքան միամիտ
է, որ կարծում է թէ աշխարհը մօռացել է Նա-
պոլէօն III-ի բռնակալ և ինքնակամ գործերը,
օրինակ, Սալօնայի և Ելիցայի ուժով գրաւել խա-
լիայից և Ֆրանսիայի հետ միացնելը Բիսմարկը
միայն Նապոլէօն կայսրի աշակերտը և հետեւողն
էր, աւելի ոչինչ. բայց չէ, ֆրանսիացի գրողի
կարծիքով, չար Բիսմարկն էր, որ աւերեց, քանդեց
իրաւունքի և արդարութեան խաղաղ և բարե-
սիրտ թագաւորութիւնը: Ergo, եթէ կամենում
են, որ այդ թագաւորութիւնը վերականգնվի,
պէտք է զսպել Պրուսիան, պէտք է նրան մտցնել
իր սահմանների մէջ, կամ, ուրիշ խօսքերով, Պրու-
սիան պէտք է մնայ փոքր, իսկ Ֆրանսիան հոգ
և այդ ժամանակ ամեն բան լաւ կը լինի: Ֆրան-
սիացու փորագրած շատ հասկանալի է. պէտք է
Գերմանիան վերադարձնէ Լյուզա-Վոլթարինդիան:

Բայց թէ այդ պարագայում, Ֆրանսիան ևս
պարտաւոր է վերադարձնել խաղաղային Սալօնայ
և Ելիցայ—այդ մասին ֆրանսիացիները խորին
լուրսիւն են պահում:

Սակայն եթէ կոյր հայրենասիրութեան բացիլ-
ները այնպէս են հիւանդացնում ֆրանսիացու
միտքը, որ նա բոլորովին ուրիշ կերպ է հասկա-
նում քաղաքական պատմութիւնը, այդ բացիլնե-
րով ոչ պակաս վարակված են և գերմանացիները,
որոնք պարտքի տակ չեն մնում: Երեքստորեայ
մի գրող Լայպցիգում հրատարակել է մի բրօշուր,
որը նոյնպէս խօսում է «Խաղաղութեան և զին-
աւորութեան մասին» մասին և առաջարկում է մի
նաւանորոգման միջոց ազգերի համաշխար-
հային խաղաղութիւնը ապահովացնելու համար:
Եթէ Եւրօպան հանգստութիւն չունի, միշտ եր-
կիւղի մէջ է, այդ նրա համար, որ Պարիզ քաղա-

առանց թղթաբանական ընտանիքին են հաստատել իրանց համար. այժմ մի ամբողջ թաղ հինգ-վեց յետոյ, հարց յարուցանել նրա ընտանիքին կործանման մասին—անմոռութիւն է և անգիտութիւն:

Պէտք էր մի ուրիշ ելք որոնել, և խնայելով արած շինութիւնները, միջոց գտնել սխալը ուղղելու:

Կան առաջարկողներ, որ սիրովսիրիկ պահանջներ տեղափոխել ուրիշ, աւելի հեռու տեղ և այդպիսով միջոց արվի քաղաքի շինութիւնների սահմանը նշանաւոր կերպով ընդարձակելու:

Քաղաքային վարչութիւնը պարտաւոր է նորից քննել նոր թաղի վիճակի խնդիրը և դադարեցնել խեղճ ընտանիքներ համեատ և անպահանջ տները բանդելը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՄԻՆԻՆԵՐ ԲԱՌՈՒՄՈՒՄ

«Վերկր» լրագրի 63-դ համարում տպւել է մի թղթաբանական թաղում, այստեղի քաղաքային ընտրութիւնների մասին, որի յօդուածագիրը սաստիկ պատարակում է Բաթումի մասնակցականներին և հայերին, մասնաւորապէս վերջիններին, այսպիսի դիրք և մտքեր յատկացնելով նրանց, որ միայն թղթաբանական գոյութիւն ունեն: Խօսելով ընտրութիւնն մէջ ցնէր ունեցողների վերադարձը, նա արանք բաժանում է 3 կարգի. առաջին կարգ համարում է ռուսներին, վերջիններին և յոյներին—այս երեքից մի տեսակ եռապետութիւն ստեղծելով, երկրորդ կարգում դնում է մասնակցականներին և երրորդն էլ կազմում է հայերից: Կատարելաւ արհամարհանքով անտես ենք առնում այն անարգական անվանները և անհարկութիւնները, որ ուղղված են յիշեալ յօդուածում քաղաքի մասնակցականներին և զլխաւորապէս հայերին,—այլ կը կամենայինք ըստի մի խօսք ասել բուն ընտրութիւնների առիթով:

Այստեղի քաղաքային վարչութիւնը մարտի 3-ին հրատարակեց անուանացուցակը այն անձերի և հաստատութիւնների, որոնք, նոր օրէնսդրութեան համաձայն, իրաւունք ունեն մասնակցելու քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութեան: Ընտրութիւնները տեղի կունենան յունիսի կէսերին, և ապահովապէս կարող ենք ասել, թէ դեռ ոչ մի որոշ կանաչութիւն կազմված չէ այն մասին, բայց «Վերկր» թղթաբանականները քննել մի յատուկ ձգտման հետեւելով, արդէն կուսակցութիւններ է յօդինել, այն էլ դա-

քը կամենում է համաշխարհային կենտրոնի դեր խաղալ և շարունակ սպառնում է Եւրոպայի խաղաղ դարաշրջանը: Եւ որովհետեւ Ֆրանսիան հնազանդութիւն է Պարիզին, ուստի Ֆրանսիայի մայրաքաղաքի բռնակալութիւնից աղաւթելու համար, պէտք է նրան մաս մաս անել, ամեն մի նահանգում կարող է թաղաւոր լինել Բուրբոններից մինը, մի ուրիշ նահանգում—Բոնապարտներից մինը, երրորդում կը լինի հանրապետութիւն, Պարիզն էլ թող ինքն իր գլխի ճարը տեսնի, այն ժամանակ անհանգիստ Ֆրանսիացիները կը հանդարտվեն և այլ ևս վտանգաւոր չեն լինի ուրիշների համար: Ի հարկէ, Գերմանիան այդ միջոցին կը շարունակի մնալ նոյն հոլոր, միայնակ և կաղ-տակերպով ակտիւթիւնը, մի և անբաժան, որովհետեւ նա ամենախաղաղասէր և արդարասէր երկիրն է: Միայն Ֆրանսիային և մասամբ ևս Ռուսաստանին են յատուկ ազդեցական նախաձեռն, մրցութիւնը և թշնամութիւնը, աշխարհակալութեան կիրքը. Ֆրանսիացիներն են միշտ սպառնում խաղաղային, Բէլգիային, Հոլանդիային և նրանք են ստիպում Եւրոպային սպառնալիկ վնասներ: Բայց թէ այդ ամենախաղաղասէր Պրուսիան ինչպիսի բռնակալական միջոցներին գլխից գերմանական կայսրութիւնը կազմելու համար, թէ ինչպէս նա 1864 թ. յարձակվեց Դանիայի վրա, յափշտակեց Շլէզվիգը, Հոլշտէյնը, միացրեց իր հետ Հաննովերը, այդ կէտերը, ի հարկէ, մոռանում է գերմանացի հեղինակը:

Եթէ ծագում է այդ տեսակ մի անհիմն միտք՝ ստիպել բաղամիտին մի ժողովուրդ այնպիսի քաղաքական կազմակերպութիւն ունենալ, որ բոլորովին բռնակալական միջոցներին Պրուսիան, ցանկութեան և աւանդութիւններին—զրապատճառը, «Вестник Европы» ամսագրի յօդուածագիրը,—որից քաղում ենք այս տեղեկութիւնները—բացատրում է «Կոյր հայրենասիրու-

նադան ազգութիւնները»։ Հայերի մէջ, կարելի է վստահօրէն պնդել, որ ոչ մի նախագիծ, այն էլ ինքնուրոյն կուսակցութիւն ոչ կազմված կայ և ոչ էլ այդպիսի մի միտք և պատրաստութիւն:

Քաղաքային գործերում ազգայնութեան խնդիր յուզելը կատարելապէս անտեղի է. այդտեղ ոչ մի ազգային ձգտում իր ներգործութիւնը պէտք չէ որ ունենայ, որովհետեւ զլխաւոր, մասնաւորապէս լատաւոյն ղեկավարներ նշանակելը, ընտրութիւնը այնպիսի անձինք, որոնք բացառապէս ի ներկատի ունենային քաղաքի—որ ասել է տեղական ընդհանուր ազգաբնակչութեան անտեսական, կըրթական, առողջապահական և այլ համայնական անհիմնական շահերը: Եթէ կուսակցութիւնները կազմելու տեղիք կայ, ուրեմն միմիայն այն տեսակետով, որ այդ շահերի համապատասխան կազմակերպութեան մէջ, ցանկալի և կարեւոր եղած բարեփոխումներ և բարեփոխումներ առաջացնելու կարող անձեր ընտրվեն: Իսկ այսպիսի ծրագիր իրագործելու ընդունակ մարդիկ անշուշտ միայն վրացի կամ նրանց երեսակայական դաշնակից ընտրողների մէջ չեն միայն, որ կը գտնվեն, այլ համակամարար նաև ուրիշ ցեղերին պատկանող ընտրելիների մէջ: Սակայն այդպէս են իրօք մտածում այն քանի մի վրացի ընտրողները, որոնք աշխատում են ամբողջ ընտրութեան գործն իրանց ձեռքերում ունենալ, ինչպէս ցոյց է տալիս նաև վրաց թերթի թղթաբանութիւնը, և յաւակնութիւն ունեն նոյնը իրանց քահանայութիւնը համաձայն ղեկավարելու, և որոնք այժմանից սկսում են թմբկահարել, զանազան երեսակայական միտումներ բաշխելով քաղաքի այս կամ այն ազգութեան վերաբերելով ընտրելիներին: Թող ձեռքերը խցնելով վրա դրած խոստովանեն թէ ձրոնք են, որ այժմից անազին խլրտումներով և իրարանցումներով ձգտում են այնպիսի դիրք պատրաստել քաղաքի մերձ ազգութեան համար, որ մեր ապագայ ղեկավարները մեծ մասով նրա՝ այդ ազգութեան ներկայացուցիչներից ընտրվեն:

Այժման, իր գոյութիւնը վերջացնող քաղաքային խորհրդի մէջ վրացիք անշուշտ թիւ էին կազմում. և ոչ մի ահաճութիւն չէր ներշնչի հայերին այն պարագան, որ ապագայ դումայում վրացիք իրանց անխռնութիւն թիւը կը կրկնապատկեն և եռապատկեն,—և թէ միայն ընտրելիների անհանաւորութիւնը յայտնի իրեն իբրև բարեխիղճ և քաղաքի շահերին նուիրված և ոչ թէ միայն որոշ ցեղի կամ կուսակցութեան գործիք կամ գործակից:

Թեան բացիլներին վարակումով: Մենք համաձայն չենք ամսագրի այդ զիարգիչ հետ. այստեղ դեր են խաղում աւելի «ցնդաբանութեան բացիլները»:

Կարծես այդ «ցնդաբանութեան բացիլներով» վարակված է և գերմանացի գիտնական Կարլ Խէն, որը Գերմանիայի ընկերական-տնտեսական վիճակը բարեփոխելու համար մշակել է հետեւեալ ծրագիրը: Գերմանիա, Բէլգիա, Խաղաղ այնքան լցված են ժողովուրդով, որ այլ ևս նրանց մէջ տեղ չը կայ, անհամար բանւորների տեղ և հաց չեն գտնում, ուստի կարող են ուսնակիւս անել սահմանները և մեծ արեւելեան պատմութեամբ: Միւս կողմից ռուսների թիւը աճալով է, բայց նրանք բարոյականութիւնը շատ ստոր աստիճանի վրա է կանգնած: Մի երկու, երեք տարիներից յետոյ ռուսները կարող են աւելի արշաւանք գործել դէպի արեւմուտք և դարձեալ կը վերականգնեն Լէնինթուրի ժամանակները: Եւ ահա այդ բոլոր չարիքների առաջն առնելու համար, զօկտոր Խէնի կարծիքով, պէտք է ռուսներին մեղադրել: Այդ շարժման առաջը առնել, իսկ գերմանացիներին արեւելք գնալ: Մի միայն քաղաքական նախապայտարարումներն են տարածել այնպիսի սուտ լուր, թէ իբր Ռուսաստանը նոյնպիսի պետութիւն է, ինչպէս և Եւրոպայի միւս պետութիւնները, ուստի և նրա վերաբերմամբ ևս պէտք է գործադրել «անմիջամտութեան պրինցիպը», միջնդեռ. նա, ասում է Խէնը, մեղ համար ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն, ինչ որ մեր հայրերի համար էր սլավոնների երկիրը, այնքան մի երկիր, որ ինքն ընտրվելու նախաձեռնութիւն է մեր գաղթականութեան համար:

Ինչպէս ենք մենք, ընթերցող, ցնդաբանութեան բացիլներով վարակված գերմանացի գիտնականը խնդիրը շատ հեշտութեամբ է լուծում: Սկիզբնաւորութիւնը, ասում է նա, պէտք է հիմնվի աշխատանքի վրա. «միակ նուաճումը բա-

նակութիւն»։ Նոյն յօդուածում թղթաբանը յիշում է միանգամայն մի ինչոր «Ֆարալաւոր ազգութիւն» մասին, որով իբր թէ հպարտանում են այստեղի հայերը: Հայերն այդպիսի ազգութիւն չունեն և թղթաբանը վերագրելով նրան, այդ ֆարալաւորին՝ առաջնորդի դեր, ցոյց է տալիս պարզապէս իր տգիտութիւնը հայոց ներքին գործերի նկատմամբ...

Մենք մի երկրորդ յօդուածով կը վերադառնանք այդ ընտրութիւնների խնդրին, որ այժմ խմորվում է այստեղ:

Բաթում Ա. Ս. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարա, մարտի 10-ին Ներկական ուղարկելով № 356 անգործագիրը «Իսթ» լրագրի մի համար, որտեղ ղեկավարված է Կարա քաղաքի աղքատներին օգնելու համար կազմված Մասնաժողովի հաշիւը և որի մէջ մտնում է յօդուած նոյն աղքատների նուէրների տուղներից ցուցակը, խոնարհաբար խնդրում եմ խմբագրութեանը ընդունել մասնաժողովի անկողն շնորհակալութիւնը, ձեր ուղարկած 100 բոբլու համար:

Մասնաժողովի նախագահ՝ Լ. Պետանդէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին ժամանակներս տեղական հայոց թերթերում լուրեր են երևում, որ իբրև թէ Եւրոպայի մտադրութիւն ունի հիմնելու վանական դպրոցների քահանաներ պատրաստելու համար, և նոյն իսկ գովասանքով են վերաբերվում այդ լուրերին: Մեղ միանգամայն զարմացնում է այդ բանը—Մենք արդէն ունենք թեմական դպրոցների և մտադրութիւն կայ հիմնելու նոր թեմական դպրոցների նպատակն է պատրաստել զլխաւորապէս քահանայացուներ: Ուրեմն էլ ինչ միտք ունի ինչ որ վանական դպրոցներ հիմնել հոգեւորականների պատրաստելու նպատակով, քանի որ դրա համար գոյութիւն ունեն թեմական հոգևոր դպրոցներ: Եթէ ուղում էք գործ շինել—ապահովացրէք այդ թեմական դպրոցները և կարգի բերէք դրանց:

Մի մասնաւոր նամակով հետեւեալ տեղեկու-

ական չէ: Նա բերում է հետեւեալ օրինակը. «Եւրոպայից, որ մի անքնակ կղզում հաստատում են իրանց ընտանիքները երկու ընտանիք, որոնք բաժանում են իրանց մէջ ամբողջ հողը: Երեսն տարուց յետոյ յայտնվում է, որ մի ընտանիքի համար հողի բերքը բաւական չէ, որովհետեւ ընտանիքը աճել և բազմացել է: Գալով միւս ընտանիքին, նա չը նայելով իր թւի սակաւութեան, նոյնպէս չէ կարողանում ապրուստի միջոցներ գտնել իր ընտանիքի և ծուլութեան պատճառով: Իրերի այդ վիճակի մէջ, աւելի խելացի չի լինի, եթէ առաջին ընտանիքի անդամները նուաճեն ամբողջ կղզին և հող տանեն, որ նրա բոլոր ընտանիքները, մի մասը իբրև տէրեր, իսկ միւս մասը իբրև ընտանիքներ Եւրոպայի լինեն: Այդ օրինակը բերելուց յետոյ, զօկտոր Խէնը համոզմամբ է ռուս և գերմանացի ազգերը հետեւեալ կերպով. «Ինչ լաւ բաներ ռուսներն ունեն գերմանացիներին են պարտական, գերմանացիներն են, որ մտքով են թաղմ հոգանք ռուսական բարբարոսութեան» մէջ. նրանք են կազմել ինտելիգենցիա, բարձրացրել են արդիւնագործութիւնը և դրել են եւրոպական կուլտուրայի դրոշմը, որը սակայն ռուս ժողովուրդի համար օտար է մնացել. այդ ազգը չէ կարողանում մինչև անգամ մշակել իր հողերը, մինչ այդ բանը կարողացան անել մի թէ և դարձեալ ոչ քաղաքակրթված, բայց գործունեալ ժողովուրդը—բոլորները: Ամբողջ աշխարհը գիտէ, որ ռուս գիւղացին անհնարաբար լինելով արեւելգործի և ծուլութեան, որ արեւել և աւելի է ընկնում, որ նա մեռնում է քաղաքացիութիւնից ամենաառաջին և թողնում է, որ ղեկավար ծածկվին աւաղով, որ ռուս ծառայող դասակարգը կարողանալ է և անհղուհական, որ ինտելիգենցիան ըստ մեծի մասին կամ յուսանատ նիւթիլտաներ են կամ ուսուցիչներ... Այդ նկարագրութիւնից յետոյ, կարծում է գեր-

թիւն են հաղորդում թիւրքաց Հայաստանից. «Բասենի Գալի-Բաբայ գիւղի Օհան աղի տունը օր ցերեկով մի քանի հրոսակներ կը պաշարեն և չափազանց փողի պահանջներ կընեն: Օհան աղան կը մերժէ նրանց պահանջը: Հրոսակներից մէկը ատրճանակով կը դարձնի Օհան աղային, բայց վերջը անմեղա է. ատրճանակի ձէնէն դուրս կուգան Օհան աղայի տղայը, հայր վիրաւորած կը տեսնեն, կը սկսեն պատերազմել հրոսակաց հետ և այդ կուէ մէջ երկու քիւրդ կը մեռնեն»:

Մեղ հաղորդում են, որ երէկ, մարտի 30-ին ճանապարհ ընկաւ. դէպի Ախալցխա Անանիա վարդապետ Համադասպեան, յաջորդի պաշտօնով: Այդ առիթով հարկաւոր ենք համարում ասել մի քանի խօսք. Անանիա վարդապետը, երկու տարի վարելով Թիֆլիսի կոնսիստորիայի նախնադամ պաշտօնը, ցոյց տուեց, որ ունի կամքի հաստատութիւն և անկողնապահութիւն, յատկութիւններ, որոնք շատ կարեւոր են ամեն մի վարչական անձի համար, և որոնցով նա գրաւեց Թիֆլիսի հայ հասարակութեան համակրութիւնը: Հմարտ է, Անանիա վարդապետը բարձր ուսում չունի, և ոչ էլ բարձր դիրք մեր եկեղեցական իերար-խիայի մէջ, բայց եթէ նա ապագայումն էլ կը ղեկավարվի անկողնապահութեամբ, կը պահպանի իր կամքի հաստատութիւնը և միշտ կողմնակից կը լինի լաւ գործերին, նա անկասկած մեծ համակրութիւն կը գտնի թէ Ախալցխայում, ուր նա այժմ գնում է պաշտօնով, և թէ ամեն տեղ, որտեղ նրան կը տան իր պաշտօնը:

Պետերբուրգում որ և է դրադմուք կամ պաշտօն պտուղ մարդկանց թիւը այնքան մեծ է, որ մի քանի յանձնարարական գրասենյակներ, մայրաքաղաքի լրագրողների խօսքերով, հրաժարվում են գրել նոր կանդիդատներին անունները, բացառելով թէ կան շատերը, որոնք երկու տարուց աւելի անգործ են և մինչև այսօր էլ պաշտօն չեն գտել:

Լոյս տեսաւ Էյմիլիանի «Արարատ» ամսագրի մարտի համարը, նոյնպէս առանց պաշտօնական բաժնի, առանց այն տեղեկութիւնների, որոնք իւրաքանչիւր պաշտօնական օրգանի անհրաժեշտ մասն են կազմում: Հարկաւոր քահանաներ, ուսուցիչներ և անձինք, որոնք զանազան գործերով կազմված են Էյմիլիանի հոգևոր իշխանութեան հետ, անհամբեր սպասում են, թէ ինչ կարգադրութիւն-

մասնացի գիտնականը, ամեն բան պարզ է: Ռուս ժողովուրդը անընդունակ է մշակել հողը, որի վրա նա ապրում է. գերմանացիները պէտք ունեն հողի և կարող են ամենաառատ պտուղներ ստանալ նրանից: Գերմանացիները ինտելիգենցիայի յաւելուածից չարաբարվում են. ռուսներին պէտք են ազնիւ, գործունեալ խոտիկներ մարդիկ, ուրեմն նրանք հէնց ստեղծված են ռուսներին համար, բայց անհաշիւ է ինչը, ուստի պէտք է ուղարկել Ռուսաստան տասն միլիոն գերմանացի և երկու ազգերն ևս վրկված են:

Բայց գուցէ մէկը հարցնելու լինի, թէ ինչ միջոց է առաջարկում այդ «ցնդաբանութեան բացիլներով» վարակված գիտնականը այդ մեծ նպատակին հասնելու համար: Մի շատ հեշտ միջոց, «որն է աւելի լաւ, ասում է նա, մեր թնդանութիւնը ուղղել մեր անգործ բանւորներին, մեր գերմանացի երաբարներին ոչնչացնելու համար, թէ նրանցով աշխատանքի և անսպառ հարստութեան ասպարէզ ձեռք բերել: Եւ ինչ բան կարող է մեղ յետ պահել Անանիային և յարգանքը դէպի ռուսաց կայսրութիւնը: Բայց չէ որ այդ յարգանքը մեր նախնիներին յետ չը պահեց հոգ մէջական կայսրութեան վրա յարձակվելուց, թէ նա այդ յարգանքին ըստ ամենայն արժանի էր: Եթէ բարբարոսները լաւ է որ զօկտոր խոտիլտուում է այդ) չամայեցին յարձակվել այնպիսի բարձր քաղաքակրթված պետութեան վրա, ինչպէս մենք պէտք է վախճանք այդ անկույց, քանի որ դրանով պէտք է տարածենք կուլտուրա մի մեծի մասին կողջունեն մեղ իբրև ազատարարներ:

Իսկ եթէ, յարգելի զօկտոր, ողջունեն ձեռք տրին սակարգը կարողանալ է և անհղուհական, որ ինտելիգենցիան ըստ մեծի մասին կամ յուսանատ նիւթիլտաներ են կամ ուսուցիչներ... Այդ նկարագրութիւնից յետոյ, կարծում է գեր-

Դադարի վրա զրկած էին պատկերներ՝ ազգականներին, սեյմին, Պէշտ քաղաքին և հոնվեյներին կողմից: Եթե այդ դամբանական ճառը չափազանց սրտաշարժ էր: Նա, ի միջի այլոց, առաջինը անցնում էր իր անցյալին: Երբ դադարի ետևից ընկած լինում էր ամբողջ ազգը, թո՛ղ նա չհակառակորդները մեկնում են քեզ իրանց ձեռքերը: Դու հանգիստ ես առնում ժողովրդի բարեկամներին՝ Գեալի և Բառախանի մոտ: Դրանից յետո՛ւ յաղթական տրիումֆիրա՛ս: Պատգամաբար Պէշտ բացեց զերեզմանի վրա հոնվեյներին դրոշակը, որը կոչուեց որդին համբուրնց: Թաղումից յետո՛ւ հանգուցեալի որդուն անհամար այցելութիւններ արին:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, փետրվարի 28-ին
Նոր-Ջուղայի նորակազմ (Բաֆֆի) ընթերցասիրաց ընկերութեան բացման հանդէսը տեղի ունեցաւ փետրվարի 22-ին, երեկոյան 6 1/2 ժամին ըստ եւրոպացիների, պ. Գեորգ Ներսէսեանի ապարանքում: Հրաւիրատուների համաձայն, բացման հանդիսին ներկայ էին արդէն ոչ միայն ընկերութեան բոլոր անդամակիցները, այլ և մօտ հարկեր քսան հոգու չափ պատուաւոր հիւրեր և տիկիններ: Հանդիսի ժամանակ նուազում էր եւրոպական եղանակներ քսանի չափ պատանիներից կազմված երաժշտական խմբակը: Ընկերութեան անօրէն դպրոցի Մ. Աղանուրեանց հանդէսը բացեց մի համառօտ ճառով՝ բացատրելով նորակազմ ընկերութեան օգտաւէտ և բարի նպատակը, որին նետեց «Հայոց քաջագործ» երգը: պ. Գ. Զօհրաբեանց անմիջապէս կարդաց մի յորդորական ուղերձ՝ ուղղւած ընկերութեան անդամակից երկուստեքներին, գովելով նոր-Ջուղայիցիների որոշումը՝ բանալու «Բաֆֆի» ընկերութեան մի բաժինը այս հայաբնակ կենտրոնում: Գրանից յետո՛ւ երկու երկուստեք թատերական ձևով մի յօդուած կարդային, մեծ զուարճութիւն պատճառելով հանդիսականներին:

Կէս ժամի չափ հանդէսը դադար առնելով՝ բոլոր հանդիսականները հիւրասիրվեցան թէյով: Այնուհետև Գ. Զօհրաբեանց, ցոյց տալու համար թէ ո՛վ էր Բաֆֆին, որի անունը երկու քոյր ընկերութիւնները պարծանքով կրէին և իրանց ընթերցարանի ձևատր վրա, պատմեց Բաֆֆիի համառօտ կենսը և զարկանական ասպարիզում հայ հասարակութեան մատուցած գնահատելի ծառայութիւնը: Այդ ատենախօսութիւնը փակվեց «Հայրենասէր Արամեանց» երգով: պ. Ն. Ա. Նեղայեանց ևս Գամառ-Բաթիպայի զեր-աւանդներից երկու ոտանաւոր արտասանեց և ապա շարունակեց կարդալ «Բաֆֆիին» մի յօդուածը՝ «Վիպագրութիւնը հայոց մէջ» և ապա նոր կարագրեց թէ՛ հրանի «Բաֆֆիին» ընկերութեան գործունէութիւնը, այնուհետ ընթերցասէր երկուստեքների եռանդը՝ այլ քաղաքներում ևս ճիւղեր ունենալու մասին: Հանդիսի ժամանակ կարդացվեցին ընկերութեան կանոնադրութիւնից մի քանի յօդուածներ, բացատրելով որ ընկերութեան բուն և միակ նպատակն է՝ ընթերցասիրութիւնը տարածել այստեղի հայերի մէջ, յորդորելով ամենքին քաջակերել ընկերութիւնն թէ անդամակցելով: Թէ կամաւոր նմենքներով: Գրանից յետո՛ւ էլ թատերաբանողներ եղան:

Վերջում մոգական լապտերով կենդանի պատկերներ ցոյց տրեցին. մի և նոյն ժամանակ նպատակներ եղան ընթերցարանի օգտին: Հանդիսականները բաւարար և զուարթ մեկնեցան հանդիսավայրից, գոհունակութիւն յայտնելով այդ գործի համար բոլոր աշխատողներին:

Գ. Տ. Պ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Temps» լրագիրը հաւատարմութիւն է, որ Բերլինում և Վիեննայում ցանկանում են, ի նկատի ունենալով միջազգային յարաբերութիւնների լաւանալը, բարեկամութիւն հաստատել Ֆրանսիայի և խաղաղի մէջ: Այդ հանդամանքը, լրագիր կարծիքով, հնարաւորութիւն կը տա պետութիւններին վերջ տալ անընդհատ զինատրու-թեանը:

— Խաղաղական և ֆրանսիական կառավարութիւնները ցանկութիւն յայտնեցին ձեռք բերել Նապո-

լէօնի և Վիտոր-Էմանուէլի գրադրութիւնը, որ գտնվում է կոչուեց թղթերի մէջ:

— Պարիզի աւստրիական զետպանը, կոմս Գոյօշ, յանձնեց ֆրանսիական հանրապետութեան նախագահ կարնօին ս. Ստեֆանի չքանչանք մի առանձին հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ: «Figaro» լրագիրը քաղաքական մեծ նշանակութիւն է տալիս այդ բանին, մասնաւորապէս նշանը տրվեց կարնօին աւստրիական և գերմանական կայսրների հէնց տեսակցութեան օրը Արբացիում: Առհասարակ, «Figaro» լրագրի կարծիքով, այդ երեւոյթը վկայում է, որ լաւանում է Ֆրանսիայի յարաբերութիւնները երեքպետեան դաշնակցութեան հետ: Ֆրանց-Յոսէփի կայսրը՝ Ֆրանսիա եղած ժամանակ, կարողացաւ համոզվել, որ Ֆրանսիայիներին իւրեր են բամբասում և որ Ֆրանսիան ոչինչ այնքան չէ ցանկանում, որպէս իսպաղութեան պահպանելը:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 մարտի: Երկրագործութեան ղեկավարամէնտի զիւրկարո նշանակվում է պրօֆէսոր Կոստիլչէվ: Տնայնագործութեան մասնաժողովի նախագահ հրաւիրվում է Պետերբուրգի ազնուականութեան պարագլուխ Կոմս Բորրինսկի:

ՕՐԻՍՍԱ, 28 մարտի: Ռուս-սերբական համաժողովի վերջին նիստում շատ ունեցող ճանապարհների ներկայացուցիչները պահանջեցին սակագինները մինչև 1/100 կօպէկ պակսել և վերստից Ռուսաստանից Սերբիա գնացող մի քանի ապրանքներին համար: Սերբիացիները համաձայնեցին, եթէ իրանց կառավարութիւնը թող կը տա, պակասեցնել իրանց սակագինը 33 1/3-ով, առանց այդ պահանջը իրանց սակագինը 33 1/3-ով, առանց այդ պահանջները տարածելու այնպիսի ապրանքների վրա, որպէս են հացահատիկը և նաւթը: Զերմօմբան Գոմաշիան շողենաւոր շատ պակասեցրին իրանց ֆրակտ-տարիֆները Սերբիայից Ռուսաստան ներմուծող ապրանքներին համար: Ռուսաց ճանապարհների ներկայացուցիչները համաձայնեցին պակասեցնել, եթէ սերբիացիները կը պակասեցնեն իրանց սակագինը: Բեռների փոխադրութեան պայմանների համար հիմք են ընդունված Բէրնի կոնֆերենցիայի մշակած կանոնները: Ռուս-սերբական հարաբերութիւնների կառավարութիւնը յանձնված է հարաւարեմտեան ճանապարհների վարչութեանը: Համաժողովը փակված է:

ՊԵՐՏԵՐԲՈՐԳ, 29 մարտի: Հրատարակված են կանոններ կէպօնէնաների մասնակցութեան մասին՝ համառուական ցուցահանդիսին 1896 թւին Նիժնի-Նովոգորոդում: Ժողովրդական լուսաւորութեան միոնիտրութիւնը առաջարկեց պետական խորհրդին՝ զիւրկարում, փոքր քաղաքներում և աւաններում ստորին արհեստագիտական դպրոցներ բանալու նախադիւր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 29-ին		
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . .	93 ր. 10 Կ.	
Բերլինի վրա 100 մարկ	45 ր. 55 >	
Պարիզի վրա 100 ֆրանկ	36 > 87 1/2 >	
Ռուկի արծէ	7 > 47 >	
Մադրայի կուպոններ	149 > 25 >	
Արծաթ		
Բորսայի գիւթօտ	5 > 7 >	
Պետ. բանկի 5% տուա 1 շրջանի .	101 > 75 >	
. 2-րդ	102 > 50 >	
. 3-րդ		
. 4-րդ		
5% ուկրայ ընտա	160 > >	
4 1/2 ուկրայ փոխառութիւն . . .		
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.		
. 2-րդ	101 3/8 >	
. 3-րդ	101 5/8 >	
. 4-րդ		
Ներքին 5% առաջին փոխառութ.	243 > 50 >	
. երկրորդ	221 > >	
Պետական երկաթուղային ընտա. .	103 > >	
4 1/2 ընտա		
4% ներքին փոխառութեան . . .	95 1/8 > >	
5% գրաւ. թղթ. առն. կալ. բանկի	101 > 25 >	
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ.		
Գրաւ. թղթ.	192 > >	
4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի.	99 1/8 > >	
4 1/2% գրաւական թղթեր կալած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մուալ. .	153 > 25 >	
. թղթադ.	101 > 25 >	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրվաքայիններ. .	101 3/8 > 50 >	
Մոսկուայի քաղաք. օրվաքայիններ. .	101 > 75 >	
Օղէտայի	101 > 75 >	
Թիֆլիսի	98 > 25 >	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. .	99 > >	
. Գր. թղթային	99 > >	
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:		

Խաղաղի՝ ԱԼԷԲԱՆԴԻ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՐ-ԱՂԱՍՄԱԼԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԱՐԱՋԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ապրիլ ամսին 6-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաձուլի) կապալով տալու Աւետիք փրոյեսանցից դպրոցին ընծայած կալուածքը, որը գտնվում է Սուրբատակի փողոցում ընդ № 16 և 11: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան գիւնահատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից 12 ժամը: (№ 35) 2—3

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

ՆՈՐ-ՋՈՂԱՅԻ ՆՈՐԱԿԱԶՄ «ՐԱՖԳԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գործադիր մասնախումբը «Մշակի» միջոցով խնդրում է հայ հասարակութիւնից բարեհաճել խրախուսել տեղիս ընկերութիւնը որ և իցէ ներկական միջոցով, կամ թերթերով ու վիպասանական և բանասիրական գրքերով, վասն զի մանուկ ընթերցարանս կարօտ է ուսումնասիրաց և ազգասիրաց քաջակերութեան: Հասցէն. «Raffi Club, Julfa (Ispahan-Perse)» (№ 36) 2—3

ԿԱԽԵԹԱՅԻ ԱՅԳԵՏԵՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ սոյն մարտի 25-ից բացված է երրորդ բաժանուր Գոյօ-վինսկի պրօպէկտի վրա, Ն. Դ. Զուբալովի տան մէջ, քաղաքային ապակեայի կողքին, ուր կը կատարվի բացառապէս շինքով վաճառումը: Իսկ պահեստներում և մագաղաններում, որ գտնվում են՝
1) Երեւանեան հրապարակի վրա, Թամաշէվների քարվանսարայում և
2) Միխայլովսկայա փողոցի վրա, Սիւլիցկու տան մէջ № 81, կատարվում է թէ շինքով և թէ մեծ քանակութեամբ զինների վաճառումը: Ընկերութիւնը խնդրում է լուրջ ուշադրութիւն դարձնել էտիկէտի և բանդերօլի վրա: (№ 35) 3—3

Մ Ե Ծ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն

(Առանց սակարկութեան)

Եզր. Դուլասպօյների մագաղանում և պահեստում, Գոյօցօյայա փողոցի վրա, կալուածական Բանկի տան մէջ և Սարաջվի ու Ծովխանովի տան մէջ, «բալուա»:
Ձան ազան ապրանքներ և կանանց և երեխաների կատարի և յարդէ գլխարկներ 30 կօպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կատարի գլխարկներ 1 ր. 25 կօպէկից սկսած և աւելի թանկ, վուաշներ 20 կօպէկով, կրօժիկներ, ժապաւեններ, ծաղիկներ, զգեստներ և գլխարկների համար զուգներ՝ արշինը 20 կօպէկով և աւելի թանկ, անձրեակաշներ, հոյանոցներ և ձեռնոցներ 20 կօպէկից, ժերսէ 1 լուբլուց սկսած և աւելի թանկ: Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մօզային և դաշանտերէյի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատուէրի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումը: (№ 12) Յարգանքով ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՈՎՆԵՐ 25—30

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԵ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետեւեալ օպերացիաները.
1) Տօկոսբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսերի վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ԲՈՒՐԼԻ
Վ.ԱՐՈՒՐՈՒՄ.
3) Փոխանակադրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վէկէլներ և ուրիշ զօրութեաններ:
Լիազոր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ.
Գրանձ կու գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանեսով:
(№ 15) (Հ) 8—50

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազօրնայա փողոց, № 9)

Յանկացողը, ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն զիմէ կուրսերի հիմնդրին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձեր ապէս եղբ. Ծովխանովների բանկային գրասենական և կուրսերի հիմնդրի բնակարանում Օտարբադաբադի գիւմում կն՝ Тифлисъ, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэльянц. 13 — 20
№ 88

Նշելով, որ 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՐԻ ՍԻՍԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱՅ ԲՐՈՒՍՍԱՅԻ ԲՈՅՈՒԹԻ ՍՊԵՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՍԸ, որ առկէ յայտնի է ամբողջ կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և ունած առատ բերքով: Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի «Էփօսօփտե» ֆրիմայից: Գնել ցանկացողները կարող են զիմէ ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բազմում: Նույնպէս Աղա-Մուսա Մահմեդովին. Այս հասցեով. Бр. Манадакянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ. (Խ. 2) 32—32